

Թիւ 27182
Յունուար 22, 1981

Մեծայարգ
Տիար ճոզէֆ Զօրպաճեան
Առաջնորդարանի Օժանդակ
Միութեան Ատենապետ
Նիւ Եորք.

Յարգելի Տիար Զօրպաճեան,

Ստացած ենք Միութեանդ կողմէ Առաջնորդարանիս յատկացուած 5,000
--հինգ հազար-- տոլարի տարեկան նուէրը, որուն համար կը յայտնենք
մեր խորին շնորհակալութիւնը:

Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանիս թիւ 87690 ստացականը:

Ուրախ ենք հաստատելու որ Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը
հաւատարիմ մնալով իր կազմութեան նպատակներուն՝ ամէն տարի կը
կազմակերպէս հանրօգուած ձեռնարկներ եւ գոյացած հասոյթէն բաժին
կը հանէ նաեւ Առաջնորդարանին:

Մեծապէս կը գնահատենք Միութեանդ վարչականներուն եւ անդամնե-
րուն յանձն առած գոհողութիւնները եւ կատարած օգտակար ծառայու-
թիւնները: Կ'աղօթենք որ Տէրը իր մշտական հովանիին ներքեւ պահէ
ըզուրդը եւ ձեզի պարգեւէ առաւել քաջաոողջ ու երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ